ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Ռուբեն Անգալադյան[*]

Նախաբանի փոխարեն

Ինչո՞վ է այս երեք հարյուր տարիներին հայերին հրապուրել Պետերբուրգը, և ի՞նչ են տվել նրանք քաղաքին ու կայսրությանը։ Ի՞նչ են քաղաքն ու կայսրությունը տվել իրեն՝ Հայաստանին։ Եվ, իհարկե, հիշում ենք, թե որքան նշանավոր հայ անուններ են այդ երեք հարյուր տարիներին հարստացրել Հյուսիսային մայրաքաղաքի պատմությունը՝ փառաբանելով Պետերբուրգի բարձր անունը։ Հայկական սփյուռքն այս երեք հարյուր տարիների ընթացքում խիստ սակավաթիվ էր. XIX դարավերջին այստեղ 2 հազարից մի փոքր ավելի հայ էր ապրում, իսկ 1985թ. նրանց թիվը մոտ 7 հազար էր։ Միայն վերջին՝ հետխորհրդային տարիներին այն բավականաչափ ստվարացավ։ Ներկայացնեմ փայլուն անուններ տարբեր ոլորտներից, որպեսզի դրանով իսկ ցույց տամ հայերի իրական ինտեգրվածությունը պետերբուրգյան, այնուհետև լենինգրադյան հասարակությանը և դրա միջոցով՝ Ռուսաստանին, իսկ հետո՝ նաև ԽՍՀՄ-ին։ Այսօր նրանց գործերն ու անբասիր կենսագրությունն արժանի են խոր ակնածանքի թե՛ երկրում, թե՛ քաղաքում։ Բնականաբար, ներկայացվող անունները ցանկի միայն մի մասն են. ֆիզիոլոգ Լ.Ա. Օրբելի, արևելագետ Հ.Ա. Օրբելի, պետական գործիչ, կոմս Մ.Տ. Լորիս-Մելիքով, նկարիչ Հովհ.Կ. Այվազովսկի, կենսաբան Ա.Լ. Թախթաջյան, բալետի պարուհի Ա.Յա. Վահանովա, արդյունաբերող, մեկենաս, կոմս Ի.Լ. Լազարև, լեռնարդյունահանող և մեկենաս, իշխան Ս.Ս. Աբամելիք-Լազարև, գունավոր հեռուստատեսության հիմնադիր, ռադիոինժեներ Հ.Ա. Ադամյան, ֆիզիկոս Ա.Ի. Ալիխանով, ԽՍՀՄ ծովակալ Ի.Ս. Իսակով, օդաչու, Խորհրդային Միության կրկնակի հերոս Ն.Գ. Ստեփանյան, արքեպիսկոպոս Հովսեփ Արղության-Երկայնաբազուկ, հեռավոր նավարկության կապիտան, Սոցիալիստական աշխատանքի հերոս Ա.Մ. Օհանով, քանդակագործ Լ.Կ. Լազարև, դերասան Պ.Բ. Լուսպեկյան...

Հայաստանցի որքան ականավոր գործիչներ են այստեղ՝ Պետերբուրգ-Լենինգրադում կրթություն ստացել, յուրացրել այս քաղաքի մտքի բարձր մշակույթը։ Եվ, Հայաստան վերադառնալով, դարձել են ազգի ու ժամանակի

[*] Փիլիսոփա, մշակութաբան, 20 գրքի և 400 հոդվածի հեղինակ։

հպարտությունը. կոմպոզիտորներ Ալ.Ա. Սպենդիարով և Մ.Գ. Եկմալյան, ճարտարապետներ Ալ.Ի. Թամանյան և Ռ.Ս. Իսրայելյան, աստղաֆիզիկոս Վ.Հ. Համբարձումյան, ֆիզիկոս Ա.Ա. Ալիխանյան, պատմաբան Հ.Ա. Մանանդյան, բանաստեղծ Ս.Ս. Մալխասյանց, նկարիչներ Հ.Հովնաթանյան, Գ.Զ. Բաշինջաղյան և շատ ուրիշներ: Հարկավոր չէ թվարկել այս բոլոր անունների կոչումներն ու պարգևները. նրանք պարզապես ճանաչելի են:

Միևնույն ժամանակ, Սանկտ Պետերբուրգ-Լենինգրադի բազմաթիվ գիտնականներ և մշակույթի գործիչներ զբաղվել են Հայաստանի պատմությամբ և ուսումնասիրել են հայկական մշակույթը, սերտորեն համագործակցել Հայաստանի գիտության և մշակույթի գործիչների հետ: Բերեմ ընդամենը մի քանի թանկ անուն. Ա.Ս. Գրիբոյեդով, Մ.Ի. Գլինկա, Ն.Ա. Նեկրասով, Վ.Վ. Ստասով, Ն.Ա. Ռիմսկի-Կորսակով, Ա.Կ. Գլազունով, Դ.Ի. Մենդելեև. Ն.Յա. Մառ, Կ.Ս. Պետրով-Վոդկին, Ս.Ս. Ռախմանինով, Ֆ.Ի. Շալյապին, Բ.Բ. Պիոտրովսկի, Ս.Ա. Եսենին, Ի.Մ. Դյակոնով, Կ.Վ. Տրևեր, Ա.Ֆ. Յոֆֆե, Բ.Ա. Տուրաև, Ի.Պ. Պավլով, Վ.Վ. Բարտոլդ, Ն.Ի. Վավիլով, Դ.Դ. Շոստակովիչ և շատ ուրիշներ:

Այս պատճառով էլ վերոբերյալ հարցերը դառնում են անկյունաքարային և պատասխաններ են պահանջում: Իսկապես, Ռուսական կայսրության մայրաքաղաք Պետերբուրգը քիչ բան չի արել Հայաստանի համար ինչպես XVIII, XIX, այնպես էլ XXդդ. սկզբին՝ արդեն որպես երկրորդ մայրաքաղաք, Խորհրդային Հայաստանի կայացման և զարգացման շրջանում (1921թ. հետո): Հայերը Սանկտ Պետերբուրգում, Պետրոգրադում և Լենինգրադում երբեք վիճակագիրներ չեն եղել: Նրանք զբաղվել են ստեղծագործ աշխատանքով, ներգրավված են եղել բարձր գիտական մտքի ոլորտում, շատերն էլ զինվորական խիզախության հրաշքներ են գործել: Նրանք բոլորն էլ իրենց զգալի ավանդն են ներդրել Ռուսաստանի և նրա Հյուսիսային մայրաքաղաքի պատմության մեջ: Ներկայումս Պետերբուրգում ապրող հայերի մեջ կան անուններ, որոնցով քաղաքն ու երկիրը հիրավի հպարտանում են. լեգենդար բևեռախույզ, խոշոր գիտնական և պետական գործիչ, Խորհրդային Միության հերոս և Ռուսաստանի հերոս Արթուր Չիլինգարով և իր սերնդի խոշոր գեղանկարիչներից մեկը՝ հեքիաթային Զավեն Արշակունին: Ահա ևս երկու իրարից տարբեր ճակատագրեր քաղաքի կյանքում, որոնցում վառ արտահայտվել են հայի լավագույն հատկանիշները: Այսպիսին է հիասքանչ և անկանխատեսելի Հայկական Պետերբուրգը... Այս ամենի մասին է մեր պատումը:

Սկիզբը. Պետրոսյան դարաշրջան

Նոր մայրաքաղաքի կառուցումը Ռուսաստանի համար երկրի և իշխանության արդիականացման ճանապարհ էր բացում: Դա ժամանակի հրամայականն էր: Հետևում էին մնացել հոլանդական և անգլիական բուրժուական հեղափոխությունները, առջևում նշմարվում էին Ֆրանսիական մեծ հեղափոխությունը և

Անգլիայից Նոր աշխարհի անկախացումը, ինչպես նաև Միացյալ Նահանգների ծնունդը: Աշխարհը թևակոխում էր Լուսավորության և արկածախնդրության դարաշրջան: 1703թ. սկսվեց քաղաքի շինարարությունը: Ճահիճներ և խրուտներ, տրտմալի ջրային մակերեսներ, այս ու այնտեղ՝ երեք-հինգ տնից բաղկացած գյուղակներ, հիվանդություններ և գյուղացիների դատաքննություններ, երիտասարդ ցարի և նրա զինակիցների անասելի խանդավառություն... Ամենուրեք ռուսերեն խոսք էր հնչում՝ տեղ-տեղ խառնվելով հոլանդերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, ֆիններեն խոսքին... Առանց չափազանցության, Պետերբուրգը կառուցում էր աշխարհի կեսը: Կառուցում էին ոչ միայն տներ, առանձնատներ, փողոցներ, պուրակներ, հրապարակներ ու շենքեր, ջրանցքներ, լողափեր, ամրոց ու նավամատույցներ... այլ նաև տնտեսական ու, առաջին հերթին, առևտրաարդյունաբերական կապեր, հաստատվում էին դիվանագիտական հարաբերություններ, գցվում էին առևտրային (այդ թվում և ծովային, ինչն այնքան ցանկալի էր) ուղիներ և կառուցվում էին, ուղղակի իմաստով, ճանապարհներ: Զբաղվում էին արդի զենքի առևտրով, առանց որի Ռուսաստանը չէր կարող հավակնություններ ունենալ ոչ այստեղ՝ հյուսիս-արևմուտքում, ոչ հարավում, ոչ արևելքում... Եթե միանգամայն անկեղծ լինենք, նոր աշխարհակարգ էր կառուցվում: Եվ այս հարցում նախագնացները հայերն էին: Ցարը դեռ մանկուց գիտեր, թե ինչպես էր իր հայրը՝ Ալեքսեյ Միխայլովիչը վերաբերվում հայկական խոշոր առևտրային տներին, ինչ արտոնություններ էր տվել նրանց, և ինչպես էին նրանք առևտուր հաստատել Իրանի, Հնդկաստանի ու Չինաստանի հետ: Ինքը՝ Պետրոս I-ն էլ դեռ 1695թ. Պարսից շահին ուղղած իր նամակում պահանջում էր, որ մետաքսի ողջ առևտուրը, որը կենտրոնացած էր հայ վաճառականների ձեռքում, ուղղվեր հարավի գլխավոր դարպասներով՝ Աստրախանից Մոսկվա, և որ «այդ հայերին ցարական մեծության պետության մեջ առևտրի համար նախատեսված ապրանքներով սահմանամերձ քաղաքներում թույլ տան անցնել առանց հապաղման, առանց որևէ խոչընդոտի» [1, c. 212]: Եվ այսպես, հայերն առաջինը ցույց տվեցին, որ նոր մայրաքաղաքը պետք է ուղղակիորեն առևտուր անի Եվրոպայի հետ, ինչին անասելիորեն ուրախ էր ինքը՝ ցարը, քանզի հենց այդ նպատակի համար էր կառուցվում Պետերբուրգը:

Մտածելով մահմեդական լծից Հայաստանի ազատագրման մասին, ստեղծելով անկախ ազգային պետություն՝ XVIIդ. վերջի – XVIIIդ. սկզբի հայկական էլիտան, երկար տատանումներից հետո, կողմնորոշվեց. ինչ գնով էլ լինի Հայաստանը մտցնել Ռուսական կայսրության հովանու ներքո, և այս ուղղությամբ կարևոր ու հաջող քայլեր էին ձեռնարկում: Այս հարցում չափազանց կարևոր էր Հայաստանի նշանավոր գերդաստանների կարծիքը: Առաջին անգամ երկար դարեր հետո Հայաստանը պետք է մտնի քրիստոնեական կայսրության կազմի մեջ: Այս գործընթացին օգնեցին Ալեքսեյ Միխայլովիչ ցա-

րի բարի և երկարատև փոխհարաբերությունները Ջուղայի հայ վաճառականական նշանավոր տների հետ: Սա խիստ կարևոր էր նաև Պետրոս I-ի համար, որի համար ծայր հարավում գտնվող Հայաստանը, դեպի ուր ամեն կերպ ձգտում էր, բնական դաշնակից էր և իր ռազմավարական քաղաքականությունն (պարսիկների և օսմանցիների դուրսմղումն ինչպես Կովկասից, այնպես էլ Անդրկովկասից, իսկ օսմանցիներին՝ նաև Սև ծովից ու Ղրիմից, Կովկասում և Սև ծովում տիրապետություն հաստատելը, ինչպես նաև Հնդկաստան տանող առևտրային ճանապարհները՝ դեպի օվկիանոս ելքով) անցկացնողը: Այս ամենն ապագա Ռուսաստանի՝ որպես համաշխարհային տերության, համար չափազանց կարևոր տարրեր էին: Եվ ռազմավարական այս քաղաքականության մեջ Պետրոս I-ը (առաջ անցնելով՝ ասենք, որ հետագայում այս ռազմավարության կողմնակիցը կլինեն և՛ Եկատերինա II-ը, և՛ Նիկոլայ I-ը, և՛ Ալեքսանդր II-ը, այսինքն՝ կայսրության զարգացման տրամաբանությունն ինքը) հայերին էր հատկացրել առանցքային դերերից մեկը: Դա երևում է նաև նրա հրամաններից, հետագայում՝ նաև պատմությունից, բայց խոսքն այս մասին դեռ առջևում է: Այստեղ ոչ պակաս կարևոր դեր պետք է խաղային հայերի խոր գիտելիքներն աշխարհընկալման, հոգեբանության, մշակույթի և այլ ժողովուրդների կենցաղի իմացության մեջ, համոզելու նրանց կարողությունը՝ իսկական վստահության մթնոլորտ ստեղծելով: Ռազմական հակամարտությունների շրջանում հայերը կարողանում էին նաև զենքով պաշտպանել իրենց կողմնակցի շահերը: Եվ, իհարկե, հայ առևտրային կապիտալի հսկայական տնտեսական հնարավորությունները կարևոր փաստարկ էին այս հարցերում: Թեև Հայաստանի միացումը Ռուսական կայսրությանը տեղի չի ունեցել Պետրոս I-ի օրոք, այլ գրեթե հարյուր տարի հետո, և ամբողջ Հայաստանը չէ, այլ միայն Արևելյան մասը, չնայած դրան՝ Ռուսական կայսրությունում Հայաստանի և հայ ժողովրդի ինտեգրման մեխանիզմը գործի էր դրվել հենց Պետրոս I-ի օրոք:

Եվ այսպես, 1707թ. Մակարով-Խաստատովների տոհմի ռուսական ճյուղի նահապետ Սաֆար Վասիլևը դիմում է Պետրոս I-ին խնդրագրով, որպեսզի վերջինս թույլ տա առևտուր անել գերմանական հողերի հետ (գերման ազգի Սրբազան Հռոմեական կայսրություն) հենց Սանկտ Պետերբուրգից, ելնելով այն բանից, որ Արխանգելսկով անցնող ճանապարհն ավելի երկար էր, հետևաբար և թանկ: Այսպես Պետերբուրգն սկսեց հարաբերություններ հաստատել Արևմուտքի հետ: Բնականաբար, այս առաջարկը Պետրոս I-ի սրտով էր և ուղղակիորեն համապատասխանում էր նրա ծրագրերին ու մտադրություններին: Այսպես 1710թ. քաղաքում հաստատվեց հայ վաճառականների մի փոքր գաղութ, որն էլ սկսեց նոր առևտրային ուղիներ բացել՝ Ռուսաստանը դուրս բերելով եվրոպական, իսկ եվրոպական ապրանքները՝ ռուսական շուկա: Հայերը միաժամանակ հարաբերությունները շարունակում էին Հարավի և

Արևելքի հետ՝ Պետերբուրգը հարստացնելով նաև այս առևտրային կապերով: Հայ վաճառականական տների ուժն ու հզորությունը հասկանալու համար դիմենք գերմանացի մեծ փիլիսոփա Իմանուիլ Կանտին. «...հայերի մեջ իշխում է մի ինչ-որ առանձնահատուկ առևտրային ոգի, այն է՝ նրանք զբաղվում են փոխանակմամբ՝ ոտքով ճամփորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվինեայի ափի Կորսոյի հրվանդանը. սա մատնանշում է այս խելամիտ և աշխատասեր ժողովրդի հատուկ ծագումը, որը հյուսիս-արևելքից մինչև հարավ-արևմուտք անցնում է գրեթե ողջ Հին աշխարհը և կարողանում գտնել սիրալիր ընդունելություն այն բոլոր ժողովուրդների կողմից, ում մոտ լինում է: Սա ապացուցում է նրանց բնավորության գերազանցությունը...» [2, c. 572-573]:

Որպես ասվածի ապացույց բերեմ մի քանի հատված Պետրոս I-ի հրամաններից: 1711թ. ապրիլի 11-ի հրամանի յոթերորդ պարագրաֆում ասվում է. «Խթանել պարսկական առևտուրը, և Հայերին որքան հնարավոր է սիրաշահել և թեթևացնել պատշաճ կերպով, որպեսզի ավելի շահագրգիռ լինեն այստեղ գալու» [3, c. 663; 4, c. 7]: Նոր մայրաքաղաքը փայլ ու վեհություն էր ձեռք բերում: Եվ Պետրոս I-ի համար կարևոր էր ապրանքաշրջանառությունը Պետերբուրգի և Արևելքի, Պետերբուրգի և Արևմուտքի միջև: 1711թ. մայիսի 2-ին Պետրոս I-ն իր հրամանով հայ վաճառականներին տալիս է Ռուսաստանում բոլոր իրավունքներն ու արտոնությունները [3, c. 675; 4, c. 8]: Որպես Պետերբուրգի շինարարության մեջ ունեցած մեծ վաստակի արդյունք 1723թ. նոյեմբերի 10-ի պատվոգրով Պետրոս I-ը, դիմելով Եսայի պատրիարքին և ողջ հայ ժողովրդին, ասում է. «Մեր այս ողորմած պատվոգրով հայտարարում ենք ձեզ, որ Մենք... ձեզ ձեր ընտանիքներով ընդունում ենք Բարձրագույն կայսերական հովանու ներքո... և քանզի ազնիվ Հայ ժողովրդին հանուն Քրիստոնեության հատուկ մեր ողորմածությամբ ենք պահում...» [3, c. 137]:

Պետերբուրգում հաստատված առաջին խոշոր վաճառականներից մեկը Ղուկաս Շիրվանովն էր: Նա Աստրախանում և Ղզլարում մետաքսե և բամբակե գործվածքեղենի մշակման ֆաբրիկաներ ուներ: Պետերբուրգ է եկել 1708թ. և հիմնել իր առևտրային տունը: 1710թ. բացվեցին «հայկական գրասենյակները» [5]: Այդ ժամանակ արդեն հայերի թիվը հասնում էր մոտ 50 մարդու: Նրանք խոշոր վաճառականներ էին և հմուտ արհեստավորներ: Չափազանց հետաքրքիր էր այն հանգամանքը, որ արդեն 1726թ. ռուս-եվրոպական առևտրի 90%-ը բաժին էր ընկնում նոր մայրաքաղաքին՝ Պետերբուրգին: Կամ, ասենք, Աստրախանով և Պետերբուրգով (արդեն կարևոր առևտրային ճանապարհներից մեկն էր) անցնող ապրանքների գինը 2.749.659 ռուբլի էր, այդ շրջանառության 80%-ը վարում էին հայ վաճառականները [6]: 1730-ական թթ. սկզբին Վասիլևյան կղզու Սրեդնի պողոտայի և ներկայիս 3-րդ գծի շրջանում էր գտնվում Հայկական փողոցը, որտեղ հողը պատկանում էր սկզբում Ղուկաս Շիրվանովին, հետո՝ մեկ այլ հայ վաճառականի՝ Արտեմի Շերիմանին, որը նավերի, մանուֆակտուրաների և անմիջապես Ձմեռային պալատի մերձա-

կայքում գտնվող տների սեփականատեր էր և հայտնի ոսկերիչ: Հայկական փողոցը շատ մոտ էր նավամատույցին, և դա իր բացատրությունն ունի. այդպես էր պահանջում առևտրային գործը: Ի դեպ, այստեղ էր առաջին հայկական եկեղեցին, փայտե մի կառույց, որը շուտով այրվեց և չի պահպանվել:

Այդ տասնամյակում (1740-1750թթ.) սա էր համարվում Պետերբուրգի հայկական գլխավոր համայնքը: Համայնքին եկեղեցի էր հարկավոր: Դեռ 1714թ. Մինաս վարդապետը դիմեց ենթականցլեր, բարոն Շաֆիրովին «...թույլ տալու համար, որ Ս.Պետերբուրգում Հայկական եկեղեցի կառուցեն» [4, c. 358]: Եվ միայն Աննա Իոանովնայի 1740թ. մարտի 11-ի հրամանով հայկական համայնքը թույտվություն ստացավ եկեղեցի կառուցել:

Եկատերինա Մեծ

Միայն Եկատերինա Մեծի կառավարման օրոք կատարվեց կարևոր և նշանային մի իրադարձություն. Պետերբուրգում, Նևսկի պողոտայում ձեռք բերվեց եկեղեցի (ճարտարապետ՝ Յու.Մ. Ֆելտեն), որն իր կարգավիճակով արժանի էր հայկական գաղութին: Այն ժամանակվա Ռուսաստանի ամենաազդեցիկ մարդկանցից մեկի՝ Ի.Լ. Լազարևի դիմումին ի պատասխան կայսրուհին Սենատ է ուղարկում անվանական հրաման, որտեղ մասնավորապես ասվում էր. «Ինչպես դեռ Կայսր Պետրոս Առաջինի ժամանակներից էր թույլատրելի այստեղ և Մոսկվայում կառուցել Հայկական եկեղեցիներ, այնպես էլ Մենք հիմա հրամայում ենք թույլ տալ Հայերին կառուցել այստեղ՝ իրենց հավատին համապատասխան եկեղեցական սպասավորում մատուցելու...» [7; 3, c. 163]: Եկեղեցու համար տարածքը ձեռք բերվեց «մայրաքաղաքում նշանավոր Մեծ (Նևսկի) պողոտայում, քարե վաճառախանութների դիմաց»: Եկեղեցու կառուցման համար հայկական համայնքը 33 հազար ռուբլի ծախսեց: 1771-1776թթ. այն վեր խոյացավ: 1780թ. փետրվարի 18-ին ութ հոգևորականների, հայ հոտի և իշխան Պոտյոմկինի ներկայությամբ հայկական եկեղեցու հեղինակավոր արքեպիսկոպոսներից մեկը՝ իշխան Հովսեփ Արղությանը (Հայաստանի հնագույն իշխանական տոհմերից մեկը), օծեց եկեղեցին սուրբ նահատակ Եկատերինայի՝ կայսրուհու երկնային հովանավորուհու անունով: Չնայած կայսրուհին օծման արարողությանը ներկա չէր, բայց հետագայում բազմիցս այցելել է Հայկական եկեղեցի և աղոթքներ պատվիրել: Առաջին հայկական տպագրությունը հիմնվեց եկեղեցու օծումից անմիջապես հետո, 1780-ական թթ., բայց երկար չգոյատևեց: 1800 թվականից եկեղեցուն կից սկսեց գործել հայկական դպրոցը, իսկ 1812-ից՝ մշտական տպագրատունը [8. c. 33, 34]:

Վերադառնալով Պետերբուրգի հայկական համայնքի ականավոր անուններին՝ ասենք, որ նրանք հիրավի ազդեցիկ մարդիկ էին, որոնք լայն կապեր ունեին ինչպես ռուսական արքունիքում, այնպես էլ եվրոպական երկրներում, Իրանում, Հնդկաստանում, արաբական աշխարհում: Օրինակ, նույն

Իվան Լազարի Լազարևը Եկատերինա Մեծի կառավարման տարիներին միաժամանակ և՛ արևելյան գործերի գծով խորհրդական էր, և՛ Ռուսաստանի Պետական բանկի խորհրդական՝ հաջողությամբ կատարելով դիվանագիտական և ֆինանսական բնույթի ոչ մեկ հանձնարարություն: Հետաքրքիր է հանրահայտ ալմաստի հետ կապված փաստը, որը գրականության մեջ մի քանի անունով է հիշատակվում. «Մեծ Մոգոլ», «Դերիանուր», «Լազարևյան», «Ռուսական», «Ամստերդամյան»: Այն ժամանակակից գրականության մեջ է մտել «Օրլով» անվամբ» (195 կարատ), քանի որ գնվել է կայսրուհու այն ժամանակվա ֆավորիտ, կոմս Գ.Օրլովի կողմից և մատուցվել է Եկատերինա II-ին 1774թ., նրա անվանակոչության օրը: Այս ալմաստն այսօր էլ գտնվում է Մոսկվայի Կրեմլի Զինապալատի Ալմազնի ֆոնդում՝ զարդարելով Ռուսաց միապետերի գայիսոնը: Ահա այս եզակի ալմաստը Օրլովը գնեց Իվան Լազարևի անմիջական մասնակցությամբ, որը հաճախ էր մասնակցում արքունիքում առանձնապես թանկարժեք ոսկերչական իրերի ձեռքբերմանը, քանի որ միաժամանակ նաև պալատական ոսկերիչն էր: Իհարկե, Լազարևները միակ ազդեցիկ հայ ընտանիքը չէին Պետերբուրգում, այստեղ էին ապրում նաև Դելյանովները, Սումբաթովները, Միրզախանովները, Հայրապետովները, Աբամելիքները, Ախշարումովները, Հախվերդովները... Նրանց մասին՝ ստորև: Բայց Իվան Լազարի Լազարևի կերպարն ամբողջացնելու համար խոսենք նրա մասին: Նա ուներ մետաքսի և բամբակի մանուֆակտուրաներ և, հնարավոր է, այդ ժամանակ Եվրոպայում լավագույն Ֆրյազինսկի ֆաբրիկան: Լազարևը Ստրոգանովներից գնեց Պերմի նահանգի լեռնային գործարանները և աղի հանքերը և ընդլայնեց արտադրությունը: Ի.Լ. Լազարևը նաև մեծ մեկենաս էր: Նա ծանոթ էր Վ.Ա. Ժուկովսկու, Ի.Ա. Վյազեմսկու, Ա.Ս. Պուշկինի, Յու.Մ. Լերմոնտովի հետ: Ի.Լ. Լազարևը մեծ հայրենասեր էր: Նրա անմիջական ղեկավարությամբ և ռուսահայերի այն ժամանակվա հոգևոր առաջնորդ, իշխան Հովսեփ Արղությանի հետ միասին մշակվում են Հայաստանի ազատագրման և հայոց պետականության վերականգնման նախագծեր՝ Ռուսական կայսրության հովանու ներքո: Այդ ժամանակ արդեն Ռուսաստանը, հանձին Եկատերինա II-ի, ռուս-թուրքական երկու պատերազմների արդյունքում միավորել էր Հյուսիսային Մերձսևծովյան շրջանը, Մերձկուբանը, ամրապնդվել էր Սև ծովում, Ղրիմի բավական պատկառելի մի մասը վերաբնակեցրել էր Մերձկուբանում՝ նրանց տալով մեծ արտոնություններ և հնարավորություններ՝ կովկասյան ժողովուրդների հետ զարգացնելու տնտեսությունը, գյուղատնտեսությունը և արհեստները: Այդ տասնամյակներին հայերը հիմնեցին Նոր Նախիջևանը, Արմավիրը, Արմյանսկը, Սուրբ Խաչը (ներկայումս՝ Բուդյոնովսկ), Գրիգորիոպոլիսը: Այսպիսով, Եկատերինա Մեծը երկրի հարավում երկու պետականակերտ էթնիկ վեկտոր նախանշեց՝ կազակական և հայկական, որոնք պետք է միմյանց փոխլրացնելով ամրապնդեին ռուսական պետականությունը հարավային սահմաններում:

Տասնիններորդ դար

Քաղաքական տեսակետից տասնութերորդ դարը Հայաստանի համար անցավ Ռուսաստանին սպասելով, որը շատ էր մոտեցել, այն ըստ էության հայտնվել էր Կովկասում: Պետերբուրգյան անվանի հայկական ընտանիքները, իհարկե, կապեր ունեին Ղարաբաղի, Գանձակի (Գյանջա) և Սյունիքի մելիքական-իշխանական տների հետ: Բանակցություններին առավել պատրաստ էին Ղարաբաղի, Գանձակի մելիքները, նրանք էլ բանակցությունների ուղարկեցին իրենց ներկայացուցիչներին: Գյանջան Ռուսաստանի կազմի մեջ մտավ 1803թ., իսկ Ղարաբաղը՝ 1806թ.: Ռուսական կայսրության ռազմավարական քաղաքականությունը Կովկասում և հետո՝ Անդրկովկասում, ժամանակի բավական մեծ հատվածի համար, սկսած Պետրոս I-ից մինչև XIX դարավերջ, ընթանում էր տանելի հունով և համապատասխանում էր հայերի շահերին: Հայերն իրենք էլ այդ տասնամյակներին ձեռքները ծալած չէին նստել, այլ զենքը ձեռքին հավատով և հույսով ծառայում էին Ռուսաստանին, ինչի մասին կպատմեմ ստորև:

XVIII դարը Հայաստանում նշանավորվում է որպես մահմեդական, հատկապես պարսկական ազդեցությանն ավելի ենթարկված: Հիշեցնենք, որ XVIIIդ. հայկական մշակույթի ամենաբարձր գագաթներն էին նկարիչներ Հովնաթանյանները և հանճարեղ բանաստեղծ-աշուղ Սայաթ-Նովան: Ի դեպ, վերջինի որդին հոր մահից հետո, XIXդ. սկզբին տեղափոխվել է Պետերբուրգ, որտեղ էլ թողել է հոր բանաստեղծությունների անվարժ, բայց հուզիչ ռուսերեն թարգմանությունները:

1812թ. Հայրենական պատերազմում հայ զինվորները, ինչպես և փառապանծ գեներալներն ու բարձրաստիճան սպաներն աչքի ընկան լավագույն կողմերով՝ խոր հայրենասիրություն ցուցաբերելով իրենց երկրորդ հայրենիքի հանդեպ: Ահա ընդամենը մի քանի անուն. Վ.Գ. Մադաթով, Դ.Ս. և Ի.Ս. Աբամելիքներ, Մ.Զ. Արղության, Դ.Ի. Ախշարումով (ի դեպ, նա հայտնի է նաև որպես 1812թ. Հայրենական պատերազմի տարեգիր) [8, c. 6], Լ.Ե. Լազարև, Պ.Մ. Մելիքով, Դ.Ա. Դելյանով, Ն.Ն. Հախվերդով, Պ.Ի. Հայրապետով, Ա.Վ. Խաստատով և ուրիշներ: Նապոլեոնի դեմ տարած փայլուն հաղթանակից հետո, 1816թ. Ալեքսանդր I-ը 1812թ. Հայրենական պատերազմի հերոս, իշխան Վ.Գ. Մադաթովին որպես հրամանատար ուղարկում է Ղարաբաղ:

Բայց պարսկա-թուրքական լծից Հայաստանի ազատագրման գործը շարունակվում է մինչև Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատումը (1917թ. հոկտեմբեր): Իսկ մինչ այդ Ռուսաստանը, հանձին Նիկոլայ I ցարի, ավելի վստահ սկսեց գործել հարավային ուղղությամբ՝ այդպիսով նշելով «արևելյան հարցը»: Կասկած չկա, որ ցարի քաջատեղյակությունն այս «հարցում» պատրաստված էր Ն.Ի. Հախվերդովի կողմից, որը Նիկոլայ I-ի խրատատուն էր [9, c. 144]: 1828թ. Ռուսաստանը և Պարսկաստանը կնքեցին Թուրք-

մենչայի հաշտության պայմանագիրը, որով ավարտվեց ռուս-պարսկական պատերազմը (1836-1828թթ.)։ Այդ ժամանակից ի վեր ընդունված է համարել, որ Արևելյան Հայաստանը մտավ Ռուսաստանի հովանու ներքո։ Այդ նույն թվականին Նիկոլայ I-ը ստորագրում է մանիֆեստ Թուրքիայի հետ պատերազմի մասին։

Ռուս-թուրքական պատերազմի սկիզբը 1828-1829թթ. էր։ Նիկոլայ I-ը հասկանում էր, որ Օսմանյան կայսրության անկումն անխուսափելի է և ամեն կերպ ակտիվացնում էր իր արտաքին քաղաքականությունը՝ ամրապնդելով Ռուսաստանի ազդեցությունն ինչպես Կովկասում, այնպես էլ Բալկաններում։ Օրինակ, Ախալցխա-Ախալքալաքում Էրզրումից և այդ շրջանի շատ այլ գյուղերից (Արևմտյան Հայաստան) շատ հայեր հաստատվեցին՝ դրանով իսկ էլ ավելի ամրապնդելով Կովկասում Ռուսաստանի ռազմավարական դիրքերը։ Այսպիսով, արևմտահայերն իրենց վստահությունը ցուցաբերեցին Ռուսաստանի հանդեպ։ Ախալցխա-Ախալքալաքը (Ջավախք, Արևելյան Հայաստան) կարևոր ռազմավարական հենակետ է՝ կապված Կարս-Արդահանի հետ, որը հապճեպ ցարական հրամանով մտցվեց Թիֆլիսի նահանգի կազմի մեջ, իսկ հետագայում, խորհրդային կարգերի հաստատման շրջանում, ավտոմատ կերպով միացվեց Խորհրդային Վրաստանին՝ այն կտրելով Հայաստանից։ Ռուսաստանը փորձում էր Էրզրում-Կարս-Արդահան-Ախալցխայից ստեղծել նահանգ՝ կամ Կարս, կամ Էրզրում կենտրոնով (հանգամանքներից ելնելով)։ Այդ ժամանակ արդեն ավելի քան հարյուր տարի էր անցել այն պահից, երբ Պետերբուրգում կազմավորվել էր հայկական սփյուռքը, և այդ ընթացքում (Նիկոլայ I-ի կառավարման տարիներ) էական փոփոխություններ նրա կառուցվածքում մենք չենք տեսնում, բացի այն, որ ավելացել էր Սանկտ Պետերբուրգի բուհերում սովորող հայ երիտասարդների թիվը։ Եվրոպական և արևելյան գործերում Ռուսաստանի ազդեցության աճին զուգահեռ ուժեղանում է նաև հայերի դերն ինչպես արքունիքում, այնպես էլ տնտեսությունում, այլ ոլորտներում։ Յուրաքանչյուր նոր կոնֆլիկտ Օսմանյան կայսրության հետ ոգեշնչում էր պետերբուրգցի հայերին, թուրքական լծից Արևմտյան Հայաստանն ազատագրելու հույս ներշնչում նրանց։ 1853-1856թթ. Ղրիմի պատերազմում աչքի ընկան մի շարք փայլուն զինվորականներ, այդ թվում և հայերի երիտասարդ սերնդի գեներալներ։ Որպես օրինակ նշեմ հեծելազորի գեներալ, Կովկասյան արշավանքների և Ղրիմի պատերազմի հերոս, Պետական խորհրդի անդամ, իշխան Վասիլի Օսիպի Բեբութովին։ Վ.Ս. Բեբութովը հայ հնագույն և անվանի տոհմի ներկայացուցիչն էր։ Հենց նա է Նիկոլայ I-ի կողմից 1830թ. նշանակվել Հայկական մարզի նահանգապետ։ Այստեղ հարգանքի է արժանացել արդարամիտ և արդյունավետ կառավարման համար։ Ի դեպ, Վ.Օ. Բեբութովը հայկական տարածքները սահմանազատեց Պարսկաստանից հօգուտ Արևելյան Հայաստանի (Ռուսական կայսրություն)։ Նրա փայլուն գործունեու-

թյան պսակը դարձավ Քուրյուք-դարայի ճակատամարտը (1854թ. հուլիսի 24) Ղրիմի պատերազմում, երբ թշնամուն թվաքանակով ավելի քան երեք անգամ զիջող ռուսական բանակը ջախջախեց 60 հազարանոց թուրքական բանակը՝ փախուստի մատնելով նրան: Առնելով այս լուրը՝ Նիկոլայ I-ը բացականչեց. «Դուք զարմացրիք Ռուսաստանը, իսկ ես կզարմացնեմ Ձեզ» և գեներալ-լեյտենանտ Վ.Օ. Բեբութովին պարգևատրեց Անդրեյ Պերվոզվաննու շքանշանով՝ շրջանցելով բոլոր շքանշաններն ու կոչումները, ինչն ինքնըստինքյան բացառիկ դեպք էր:

Ալեքսանդր II-ի օրոք հայկական գաղութի դրությունն էլ ավելի ամրապնդվեց: Հայկական անվանի տոհմերի վաստակն իրենց հանդեպ էլ ավելի բարեհաճ դարձրեց Ռուսաստանի տիրակալներին: Բոլորին էին հայտնի հայ մարտական գեներալների անունները: Զինվորական քիչ երգեր, պատմություններ չեն հորինվել ինչպես Բեբութովի (Ղրիմի պատերազմում), այնպես էլ Ա.Ա. Ղուկասովի և Ի.Դ. Լազարևի (1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմում) մասին: Հընթացս նշենք, որ Ի.Դ. Լազարևի հեղինակությունը Կովկասում այնքան մեծ էր, որ նրա անձնական մասնակցության շնորհիվ դաղստանյան երկու ապստամբությունները (1861թ. և 1863թ.) հնազանդեցվեցին առանց արյունահեղության: Հենց նրան հանձնվեց Շամիլը: Ռուսաստանի հանդեպ վիթխարի վաստակ ունի նաև ականավոր պետական գործիչ, հեծելազորի գեներալ, կոմս Մ.Տ. Լորիս-Մելիքովը, որը 1861թ. նշանակվեց հարավային Դաղստանի զինվորական հրամանատար և Դերբենտի քաղաքապետ, իսկ 1863-ից դարձավ Տերի նահանգապետը և Վլադիկավկազի քաղաքապետը: Փորձելով հնազանդեցնել հյուսիսկովկասյան ժողովուրդներին՝ Լորիս-Մելիքովը կոշտ բռնաճնշումները համակցում էր տարածաշրջանի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման միջոցներով: Լավ իմանալով լեռնցի ժողովուրդների կյանքն ու աշխարհընկալումը՝ Լորիս-Մելիքովը կերտում էր նրանց նոր ապագան, քանզի հասկանում էր, որ այդ ժողովուրդները վաղ թե ուշ պետք է թևակոխեն արդիականություն հանձին Ռուսական կայսրության: Միևնույն ժամանակ, նա զբաղվում էր նաև հայկական պետականության վերականգնման հարցերով՝ խորապես հասկանալով Ռուսաստանի դերն այս խնդրում: Հենց նա հատուկ 1880թ. հունիսին մեկնեց Բեռլին՝ հանդիպելու Մ.Խրիմյանի հետ, որն այս հարցի շուրջ բանակցություններ էր վարում եվրոպական երկրների առաջնորդների հետ. հոգևորականը պետք է ուշադրության առներ նրա կարծիքն ու ճիշտ ձևակերպեր հայերի խնդիրները Բեռլինի կոնֆերանսում: Խրիմյանը նրան չլսեց: Իզուր: Եվ այնուամենայնիվ, սա ազգային հիմնախնդրով միջազգային հարթակ դուրս գալու առաջին փորձն էր, և թեև տապալվեց, բայց դա կարևոր փորձ էր:

Կովկասյան արշավանքների մասին վերը նշվածը հաստատում է Պետրոս I-ի և Եկատերինա II-ի ռազմավարական միտքն ու կամքը հայերի դերի

մասին՝ որպես Կովկասում պետականակերտ ազգի [10]: Նշեմ, որ վաթսուն տարի հետո արդեն բոլշևիկները որպես Կովկասի մարզկոմի քարտուղար ուղարկում են Ա.Ի. Միկոյանին (1922-ից)՝ նույն առաքելությամբ: Ա.Ի. Միկոյանի շնորհիվ Հյուսիսային Օսիան չհայտնվեց Խորհրդային Վրաստանի կազմում, թեև այդպես էին պահանջում և՛ Ի.Ստալինը, և՛ Ս.Օրջոնիկիձեն [11]:

Վերադառնանք XIXդ. և ամփոփենք: Լորիս-Մելիքովի կենսագործունեությունը ցույց է տալիս նրա մտքի, կամքի, բնավորության, ինտելեկտի զարմանալի ներդաշնակությունը. նա փայլուն զորահրամանատար էր Կովկասում և Թուրքիայում, գերազանց կազմակերպիչ-բարեփոխիչ խաղաղ կյանքում, նաև մեծ պետական գործիչ էր, ում պլաններով և ջանքերով Ռուսաստանը կարող էր խուսափել ցնցումներից, եթե ցարը չվախճանվեր:

Պետերբուրգի հայ նշանավոր տոհմերից էին նաև Դելյանովները, որոնք աչքի են ընկել և՛ 1812թ. Հայրենական, և՛ ռուս-թուրքական պատերազմում: Սենատոր, Պետական խորհրդի անդամ, կոմս Իվան Դավթի Դելյանովը, ինչպես և Լորիս-Մելիքովը, Պետերբուրգի ակադեմիայի պատվավոր անդամ էր, իսկ Ալեքսանդր III-ի օրոք զբաղեցնում էր նորին կայսերական մեծություն կայսրուհի Մարիայի կանցելյարիայի գլխավոր կառավարչի պաշտոնը (1880 թվականից), այնուհետև՝ լուսավորության նախարարի պաշտոնը (1882թ.): Մի շարք բարձր պետական պաշտոններ զբաղեցնելով՝ Ի.Դ. Դելյանովը 1861թ. ընդունեց նաև Հանրային գրադարանի տնօրինությունը, որը նրա տնօրինության 21 տարիների ընթացքում ընդլայնեց իր իրավունքները. Կայսերական պալատի գերատեսչությունից անցավ Ժողովրդական լուսավորության նախարարության տնօրինությանը, այսինքն՝ դարձավ հանրային: Նրա օրոք, բացի ավանդական գործողություններից (գնումներ, նվիրատվություններ), ավելացավ գրքերի փոխանակությունը Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի բազմաթիվ գիտական հաստատությունների հետ: Իսկ 1874թ. նա իրավունք է ստանում գրադարանի ֆոնդերը համալրել առանց գրաքննության: Հանրային գրադարանը, շնորհիվ Ի.Դ. Դելյանովի, հրատարակչություններից մեկական օրինակ էր ստանում այն բոլոր գրքերից ու հոդվածներից, որոնք արգելված էին գրաքննությամբ: Զգալիորեն ավելացավ ձեռագրերի թիվը: Կոմս Դելյանովն ազատ տիրապետում էր ֆրանսերենին, գերմաներենին, անգլերենին, գիտեր նաև լատիներեն: Կայսրության շատ հաստատությունների խելամիտ ազատականացումը (նրա շնորհիվ) նպաստում էր Ռուսաստանի հզորությանը, նրա լուսավորչական մտքի զարգացմանը, ինչպես նաև ինտեգրմանը Եվրոպայի և Ամերիկայի գիտական աշխարհում:

Դեմոկրատական վերափոխումները, նարոդովոլականությունը, հեղափոխական հոսքերը չշրջանցեցին պետերբուրգցի հայերին: 1862թ. Պետերբուրգում, Ալեքսեևյան ամրոցում նստած էր հայոց նոր պատմության ամենահանելուկային և ազդեցիկ մարդկանցից մեկը՝ Միքայել Նալբանդյանը: Նա հանրագի-

տարանային կրթության տեր մարդ էր, զբաղվում էր փիլիսոփայությամբ, քաղաքատնտեսությամբ, լեզվաբանությամբ... Լոնդոնում Նալբանդյանը հանդիպել էր Գերցենի և Օգարյովի հետ, եղել էր Հնդկաստանում՝ Հայաստանի ազատագրման հնարավորությունների և ազգային պետության ստեղծման գաղտնի առաքելությամբ: Թարգմանել էր Ա.Ս. Պուշկինի, Յու.Մ. Լերմոնտովի և Հայնրիխ Հայնեի բանաստեղծությունները: Նալբանդյանը մոգական ազդեցություն է ունեցել հայ առաջադեմ երիտասարդության մի քանի սերնդի մտքերի վրա:

XIXդ. երկրորդ կեսին արդեն Պետերբուրգում կար բազմանդամ, ակտիվ և մայրաքաղաքի բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատություններում հիանալի կրթություն ստացած հայ երիտասարդություն: Հետաքրքիր է նաև այն, որ շատ տաղանդավոր պատանիներ ու աղջիկներ գալիս էին գավառներից, ոչ հարուստ ընտանիքներից: Եվ երիտասարդությունը համակված էր ազատամտությամբ և հայրենասիրությամբ: Պետերբուրգում կազմակերպվեց մտավորականների «Մարո» խմբակը (1880-1900)՝ Մ.Վարդանյանի և Մ.Սերոբյանի՝ սոցիալ-դեմոկրատական «Հնչակ» կուսակցության ապագա հիմնադիրների շուրջ, որը գոյություն ունի առայսօր: Ռուսական առաջին հեղափոխությունից հետո Պետերբուրգում ի հայտ եկան բազմաթիվ կազմակերպություններ. Հայկական խմբակը (1907-1918), Հայերի հոգաբարձուների ընկերությունը (1907-1917), Գեղեցիկ արվեստների հայկական ընկերությունը (1908-1917)...

Միջանկյալ նշենք ճարտարապետության և արվեստի մեծանուն ներկայացուցիչներին մինչև 1917թ., հիշելով, որ Պետերբուրգում են սովորել նշանավոր գեղանկարիչներ Հովհաննես Այվազովսկին, Հակոբ Հովնաթանյանը, Ստեփանոս Ներսիսյանը, Գևորգ Բաշինջաղյանը: Այստեղ՝ Պետերբուրգում է ապրել և Վ.Ֆ. Կոմիսարժևսկայայի թատրոնի համար աշխատել հայ պատմական գեղանկարչության հիմնադիր, թատերական նկարիչ, ճարտարապետ և Վ.Շեքսպիրի թարգմանիչ Վարդգես Սուրենյանցը: Երաժշտության բնագավառում բավական է նշել անվանի կոմպոզիտորներ Մ.Եկմալյանի և Ալ.Սպենդիարյանի անունները, որոնք սովորել են Պետերբուրգի կոնսերվատորիայում, Ռիմսկի-Կորսակովի մոտ: Չենք կարող չհիշել նաև օպերային երգիչ, ժամանակի լավագույն քնարական-դրամատիկական բարիտոն Բ.Ամիրջանյանցին, որը Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ էր և *«alma mater»*-ի պատիվը բարձր է պահել աշխարհի լավագույն օպերային թատրոններում, ներառյալ Լա Սկալան: Բավական է հիշել մեծ դերասան, նկարիչ, բանաստեղծ և փիլիսոփա Պետրոս Ադամյանին Արբենինի և Համլետի դերերում: Ահա թե ինչ էր գրում ռուսական մամուլը նրա մասին. «Պետք է հայ դերասան գար, որպեսզի ապացուցեր մեզ, որ Լերմոնտովը հիրավի թատերական դրամատուրգ է» (Վ.Չույկո): Ադամյանը ճանաչվել է XIXդ. երկրորդ կեսի Համլետի լավագույն դերակատարը. Էռնեստո Ռոսին, որն անզուգական Համլետ էր համարվում, տեսնելով Ադամյանին այդ դերում, նրան էր նվիրել իր լուսանկարն

ընծայագրով. «Ադամյանին՝ աշխարհում առաջին Համլետին»: Այստեղ են սովորել ճարտարապետության ապագա դասականներ Գաբրիել Տեր-Միքելովը, Նիկոլայ Բունիաթյանը, Ալեքսանդր Թամանյանը: Ավելի ուշ՝ 1914թ. Ա.Թամանյանն ընտրվեց ակադեմիկոս, իսկ 1917-ին՝ Գեղարվեստի ակադեմիայի խորհրդի նախագահ:

Այստեղ՝ Պետերբուրգում են պատմական մտքի նրբություններին տիրապետել Հայաստանի ականավոր պատմաբաններ Ն.Գ. Ադոնցը և Հ.Ա. Մանանդյանը: Սանկտ Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Ադոնցը զբաղվում էր Բյուզանդիայի պատմությամբ, Հայկական հարցով, գրել է «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» դասական աշխատությունը (1908թ.): Ակադեմիկոս Մանանդյանի աշխատությունները վերաբերում են ազգային պատմության բազմաթիվ կողմերի, ինչպես Հայաստանի պատմության անտիկ շրջանին, մասնավորապես՝ Տիգրան Մեծի թագավորությանը, այնպես էլ միջնադարին: Չենք ուզում հոդվածը ծանրաբեռնել բազմաթիվ անուններով, թեև համայնքի պատմությունը նաև վառ անհատականությունների պատմությունն է: Իսկապես, անհնար է չնշել, ասենք, ակադեմիկոս Ն.Յա. Մառի հնագիտական արշավներն Անիում՝ Հայաստանի միջնադարյան մայրաքաղաքում և 1916թ. Պետրոգրադում Մ.Գորկու կողմից «Հայ գրականության ժողովածուի» հրատարակումը: Կամ էլ նույն՝ 1916թ. իշխան Աբամելիք-Լազարևի նվերը (նրա Հռոմի ամառանոցը՝ «Աբամելիքի ամառանոցը») Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիային, որտեղ այսօր էլ գտնվում է Իտալիայում ՌԴ դեսպանատունը:

Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության շրջանում (1915թ.) հայ համայնքը և ռուս մտավորականությունն օգնեցին մայրաքաղաքում հայտնված փախստականներին, օգնեցին նաև իրեն՝ Հայաստանին: Սակայն անխուսափելիորեն մոտենում էր հեղափոխական 1917-ը, ռուս մեծ գրող Իվան Բունինի արտահայտությամբ՝ «նզովյալ օրերը»:

Այն ամենը, ինչ ապրեցին մայրաքաղաքն ու Ռուսական կայսրությունը, անբաժան էր նաև հայ գաղութից, որը թեև չափազանց փոքր էր մոսկովյանի համեմատ, բայց արժանի տեղ էր զբաղեցնում հայ-ռուսական հարաբերությունների նոր և նորագույն պատմության մեջ: Նրա կյանքի նոր փուլն սկսվեց հենց հեղափոխական 1917-ից:

Մայրաքաղաքի համայնքի դասերը կայսրության շրջանում

Եվ այնուամենայնիվ, անհրաժեշտ է ասել մի քանի խոսք համայնքի էական թերությունների մասին:

Առաջին. համայնքը ճիշտ չէր կարողանում գնահատել Հայաստանի՝ ապագա անկախ պետության պատմական հեռանկարը: Զարմանալի թեթև վերաբերմունքը հայկական սահմաններին, որոնք գծվում էին Ռուսական կայսրությունում հօգուտ վրացիների կամ՝ Բաքվի նավթի բումի ժամանակ,

հոգուտ կովկասյան թաթարների, անթույլատրելի էր: Հայկական ծագում ունեցող բարձրաստիճան պետական պաշտոնյաներն ասես չէին հասկանում, որ այդ հարևանությունը կարող է խիստ վտանգավոր լինել: Ավելին, նրանք պատգամում էին իրենց թաղել Թիֆլիսում՝ որպես հայկական քաղաք: Դրանով գայթակղվել էր նույնիսկ մեծն Թումանյանը: Այս ամենը ցույց է տալիս, որ հայկական հողի գինն այնքան էլ բարձր չէր: Այստեղից էլ դանդաղ գործողության այն ականը, որը հիմա էլ, որպես ծանր պատմական ժառանգություն, գոյություն ունի ներկայիս Հայաստանի և նրա հարևանների՝ Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև: Վերջինին պատմական ասպարեզ դուրս բերեցին ռուս չինովնիկների ինտրիգները, քանի որ վախը Բաքվի նավթի հարցում հայկական կապիտալի հզորությունից (որպես աշխարհաքաղաքական և տնտեսական ու ռազմական ստրատեգիական զենք) վախ ու նախանձ էր առաջացնում: Այն դեպքում, երբ կովկասյան թաթարները, իբր, կապված էին նրանց պարանից: Թե ինչի վերածվեց այդ խաղն այսօր, լավ հայտնի է ու նաև տեսանելի:

Երկրորդ. նման զգալի արտոնությունների պարագայում, որոնք ստացել էին հայ առևտրային գործարար, արդյունաբերական, ֆինանսական տները տարբեր միապետերի կողմից (Պետերբուրգում՝ սկսած Պետրոս Մեծից), առաջինը լինելով նոր մայրաքաղաքի միջոցով Արևելքի և Եվրոպայի հետ առևտրի մեջ, հայերը չկարողացան պահել իրենց առաջատար դրությունը Ռուսաստանում և աշխարհում: Հայ առևտրային, ֆինանսական ընկերակցությունը մասնատվեց առանձին տների, և այդ տեղն արդեն XIXդ. կեսին գրավեցին ռուսները և հրեա միջնորդները: Հայկական համայնքը Ռուսական կայսրությունը համարում էր անսասան իրողություն՝ չկասկածելով, որ այն, ինչպես և ցանկացած կայսրություն, կարող է մի ակնթարթում փլուզվել: Սակայն, հանուն արդարության անհրաժեշտ է ասել, որ ԽՍՀՄ փլուզման շրջանում հայ ժողովուրդը (ղարաբաղյան շարժումը՝ որպես ուժի և արդարության վեկտորի ազգային փնտրտուք) ճիշտ կողմնորոշվեց: Ժողովուրդը կարողացավ Ռուսական կայսրության փլուզման պատմական մեծ փորձից անհրաժեշտ հետևություններ անել՝ գործել վճռական և ամենագլխավորը՝ ժամանակին, չկործանվելու համար մահացու վիրավոր կայսրության կողմից և, միևնույն ժամանակ, չմնալ նրա փլատակների տակ:

Խորհրդային շրջան

Եվ այսպես, Արևելյան Եվրոպան վերափոխվեց Առաջին ժողովրդավարական հանրապետության (1918-1920թթ.): Բայց շուտով Առաջին հանրապետությունը դարձավ խորհրդային: Պետրոգրադը վերանվանվեց ի պատիվ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդի, և Լենինգրադը դարձավ Խորհրդային Հայաստանի արդյունաբերության, գիտական մտքի և մշակույթի վերականգնման ամենաակտիվ օգնականներից մեկը: Ի դեպ, Հայաստանի առաջին

և սիրելի ղեկավարներից մեկը՝ Աղասի Խանջյանը, 1930թ. ուղարկվեց Երևան՝ որպես Հայաստանի Կենտգործկոմի առաջին քարտուղար հենց Լենինգրադից: Ըստ առավել հավանական վարկածի, նրան անձամբ գնդակահարել է Լ.Բերիան 1936թ. Թբիլիսիում, երբ ընդամենը 35 տարեկան էր:

30-ական թթ. սկսած՝ երկիրը և քաղաքն ընդունում են ինդուստրիալացման ծրագիրը:

Լենինգրադի հայկական սփյուռքը գիտության, տեխնիկայի, մշակույթի ոլորտներում գրավում էր առաջատար դիրքերից մեկն ինչպես քաղաքի, այնպես էլ երկրի կյանքում: Այս հանգամանքներով էլ կարելի է բացատրել գիտական մտքի բուռն զարգացումը բուն Հայաստանում, քանի որ լենինգրադյան գիտական հանրությունը վերցրել էր հայ երիտասարդ գիտնականների շեֆությունը: Մշակութային սերտ կապերը Լենինգրադի և Երևանի միջև ավանդական էին բազում տասնամյակներ:

Հիմնարար և կիրառական գիտությունները և տեխնիկան վերափոխեցին XXդ. աշխարհընկալումը. առաջատարներն էին ֆիզիկան, ավիացիան, ռադիոտեխնիկան, հեռուստատեսությունը, բժշկագիտությունը (ֆիզիոլոգիա, գենետիկա, հոգեբանություն), քիմիան, որոնք սկսեցին զարգանալ երկրում և Լենինգրադում, որտեղ հայ երիտասարդությանը նույնպես հնարավորություն էր ընձեռված նվաճել այդ առաջավոր բնագծերը: Ինժեներ-էլեկտրիկ, գունավոր հեռուստատեսության հիմնադիր Հովհաննես Ադամյանը (ավելի քան քսան գյուտերի հեղինակ) դեռ դարասկզբին Գերմանիայում պատենտավորեց (1907-1908թթ.) երկգույն, իսկ 1925թ.՝ նաև եռագույն պատկերի ստացման նախագիծը: Կամ՝ Կ.Կ. Արցեուլովի նվաճումները պլաներիզմի մեջ (ի դեպ, նկարիչ Հովհ.Կ. Այվազովսկու թոռն է): Նրա կոնստրուկցիաները ռեկորդակիր էին ԽՍՀՄ-ում (1923-1925թթ.): Չմոռանանք, որ պլաներիզմը ավիացիայի և տիեզերագնացության նախակարապետն էր: Օրինակ, պլաներիզմից են սկսել Ա.Ն. Տուպոլևը, Ս.Պ. Կորոլյովը և Ա.Ս. Յակովլևը: Քսանական-վաթսունական թվականներին Լենինգրադում աշխատում էին հայ խոշոր գիտնականներ, ինչպես, օրինակ, ֆիզիոլոգ Լ.Ա. Օրբելին, որը Ի.Պ. Պավլովից հետո ղեկավարում էր ֆիզիոլոգիայի ինստիտուտը: Ի դեպ, հենց Ի.Պ. Պավլովն է առաջադրել Լևոն Աբգարի Օրբելուն Նոբելյան մրցանակի համար, և միայն հակախորհրդային տրամադրությունները շվեդական ակադեմիայում թույլ չտվեցին ականավոր գիտնականին ստանալ արժանի պարգևը: Լ.Ա. Օրբելին Ի.Մ. Սեչենովի անվան էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և բարձրագույն նյարդային գործունեության պաթոլոգիայի ինստիտուտի (ինստիտուտի շենքի առջև դրված է նրա հիմնադրի հուշարձանը), ինչպես նաև Էվոլյուցիոն կենսաքիմիայի և ֆիզիոլոգիայի ինստիտուտի հիմնադիրն ու ղեկավարն էր: Երկար տարիներ (1943-1960թթ.) եղել է Ռազմաբժշկական ակադեմիայի պետը: Հիշենք նաև նրա կրտսեր եղբորը՝ արևելագետ, Էրմիտաժի տնօրեն (1934-1951թթ.) Հ.Ա. Օրբելուն, որի ան-

երկյուղ նամակը Ստալինին կանգնեցրեց Էրմիտաժի անգին գանձերի վատնումը: Եվ դա լավ երևում է Ի.Վ. Ստալինին Հ.Ա. Օրբելու նամակից, որը հրապարակվել է 2000թ., Բ.Բ. Պիոտրովսկու կողմից, «Էրմիտաժի պատմությունում»: Այժմ անդրադառնանք աստղաֆիզիկոս Վ.Հ. Համբարձումյանին. գիտությունների դոկտորի գիտական աստիճանը նրան շնորհվել է առանց պաշտպանության: Նա ԼՊՀ պրոռեկտորն էր գիտական գծով, իսկ հետո՝ նաև աստղաֆիզիկայի ամբիոնի հիմնադիրն այդ նույն համալսարանում: Ա.Ի. Պավլովի ինստիտուտում աշխատում էր ևս մեկ ականավոր գիտնական՝ ակադեմիկոս Է.Ա. Հասրաթյանը, մեծ գիտնականի սիրելի աշակերտներից մեկը: Լենինգրադում էր ապրում և աշխատում նշանավոր նեյրոֆիզիոլոգ, ակադեմիկոս Ա.Ի. Քարամյանը: Հետաքրքիր է, որ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծումը (1943թ.) հանձնարարվեց Հովսեփ Աբգարի Օրբելուն: Նա էլ դարձավ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի առաջին նախագահը: Հայաստանի Գիտությունների ակադեմիայի առաջին գումարման 23 ակադեմիկոսներից 11-ը կրթություն էին ստացել Լենինգրադում: Նշանավոր լեզվաբան և մշակույթի պատմաբան, ակադեմիկոս Ն.Յա. Մառը, որը հնագույն ժողովուրդների և քաղաքակրթությունների պատմության և մշակույթի լավագույն գիտակներից էր և զբաղվել էր Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Անիի ուսումնասիրությամբ [12], 1925թ. Սորբոնում կարդացած դասախոսությունում զարմանալի մի միտք է արտահայտել. «Հասկանալի է, որ ոչ մի մշակույթ չի կարող հասկանալի լինել՝ առանց մի ազգի մյուսի վրա ազդեցության և հակառակ փոխազդեցությունների, բայց հայկական մշակույթն այս հարցում հատուկ տեղ է զբաղեցնում: Գտնվելով ոչ միայն ժամանակակից, կենդանի աշխարհի, այլև հին ժամանակների՝ այժմ մեռած մշակութային ժողովուրդների համաշխարհային միջազգային հարաբերությունների հանգուցակետի ամենակենտրոնում՝ հայերն առաջինն էին, որ դեռ միջին դարերում հասկացել էին համամարդկային հետաքրքրությունների ողջ նշանակությունը և գիտակցել համաշխարհային պատմության գաղափարը:- Անշուշտ, հսկայական, բայց և ծանր գործ է...» [13, c. 18]: Այսպիսին էին ականավոր գիտնականի եզրահանգումները: Շնորհիվ Մառի խորհրդի, որի ղեկավարությամբ էր աշխատում Բ.Բ. Պիոտրովսկին, երիտասարդ ուսուցիչը վերամասնագիտացավ և հին եգիպտերենի փոխարեն սկսեց ուսումնասիրել ուրարտերենը: Այսպես նա իր ճակատագիրն ընդմիշտ կապեց Հայաստանի, տարածաշրջանի հնագույն պատմության, հայ ժողովրդի ազգածագման հետ: Կարմիր բլուրի պեղումները (1939-1971թթ.) և Բ.Բ. Պիոտրովսկու առաջին իսկ գիրքը՝ «Ուրարտուի պատմությունը և մշակույթը» (1943թ.), թույլ տվեցին աշխարհի շատ երկրների՝ Հայաստանի պատմությամբ զբաղվող գիտնականներին ավելի ամբողջական և օբյեկտիվ պատկերացնել քաղաքակրթությունների հին աշխարհը: Սա բեկում էր հին աշխարհի պատմության մեջ: 1944թ. երիտասարդ

գիտնականը Երևանում փայլուն դոկտորական ատենախոսություն է պաշտպանում և... ամուսնանում խելացի ու հմայիչ Հռիփսիմե Ջանփոլադյանի հետ, որը 1945թ. հենց Երևանում էլ ունենում է առաջնեկին՝ Միխայիլ Պիոտրովսկուն՝ Էրմիտաժի ներկայիս տնօրենին: Մ.Բ. Պիոտրովսկին քիչ բան չի արել Հայաստանի մշակույթը քարոզելու համար և հանդես է եկել որպես մեծ թանգարանի գլխավոր պահապանների փառավոր գործերի արժանի շարունակող:

ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների ոգու և բնավորության մեծ փորձություն էր Հայրենական մեծ պատերազմը: Եվ, իհարկե, լենինգրադցիների՝ իրենց քաղաքը, պատիվն ու արժանապատվությունը պահողների անօրինակ սխրանքը բլոկադայի բոլոր 900 օրերին: Լենինգրադցիների և քաղաքի պաշտպանների զանգվածային հերոսությունն ընդմիշտ կմնա մարդկության պատմության մեջ: Մեծ քաղաքի շրջափակման տարեգրության մեջ եղել են և՛ հատուկ իրադարձություններ, և՛ յուրաքանչյուր՝ առանձին ազգի հերոսականության դրսևորումներ: Այստեղ նաև հայկական անուններ ենք տեսնում: Կամավորական Կ.Ի. Շչյոլկինը (Մետաքսյան)՝ Սոցիալիստական աշխատանքի ապագա եռակի հերոսը, Չելյաբինսկ-70 միջուկային կենտրոնի հիմնադիրն ու գլխավոր կոնստրուկտորն է: Տանկիստ, Խորհրդային Միության հերոս Ա.Ս. Մնացականովը (Կրասնոե սելո, Կիպեն, Վոյսկովիցի) գլխավորում էր բրիգադի երթային պահաջոկատը: Այդ նրա տանկային վաշտն առաջինը ճեղքեց շրջափակումը և միացավ 2-րդ հարվածային բանակի առաջավոր զորամասերին: Հիշենք նաև օդաչուներ, Խորհրդային Միության հերոսներ Գ.Գ. Աղամիրովի, Լ.Ս. Չապչախչյանի, Խորհրդային Միության կրկնակի հերոս Ն.Գ. Ստեփանյանի անունները: Վերջին երկուսը զոհվել են Լենինգրադն ու Բալթիկան պաշտպանելիս: Պուլկովյան բարձունքներում թշնամու ականից զոհվեց մարտական գեներալ Բ.Օ. Գալստյանը, ում անունն է կրում Պետերբուրգի փողոցներից մեկը: Սինյավյան բարձունքներում հերոսի մահով ընկավ գնդացրային վաշտի հրամանատար Վարդապետյանը: Նրա վաշտի հերոսության հիշատակին իրադարձությունների տեղում հուշատախտակ է փակցված վետերանների ձեռքով, ինչն առանձնապես թանկ է: Միևնույն ժամանակ, հենց շրջափակված քաղաքում Էրմիտաժի տնօրեն, ակադեմիկոս Հ.Ա. Օրբելին անում է հնարավոր ամեն բան՝ համաշխարհային արվեստի գլուխգործոցները փրկելու համար: Նրա ղեկավարությամբ շրջափակված քաղաքում Էրմիտաժի աշխատակիցները չէին դադարեցնում ոչ գիտական, ոչ լուսավորչական գործունեությունը: Առաջ անցնելով ասենք, որ մշակութային արժեքների գծով մեղադրողներից մեկը Նյուրնբերգյան դատավարությունում ակադեմիկոս Հ.Ա. Օրբելին էր: Իսկ 1941-ի ձմռանը հյուսիսային Հայաստանի լեռներում գտնվող հեռավոր Սանահին գյուղում ջերմություն ու քնքշանք գտան Լադոգայի սառույցներն անցնելու վախից սարսափահար ու երկար ճանապարհից հոգնատանջ լենինգրադցի երեխաները: Մանկատան երեխաներն էին: Որբուկներն այստեղ գտան իրենց

հարազատներին: Լենինգրադցի երեխաները որդեգրվեցին՝ այստեղ գտնելով իրենց նոր ու հարազատ օջախը:

Հետպատերազմյան բոլոր տարիներին Լենինգրադի հայ սփյուռքը շարունակում էր կատարյալ նվիրումով աշխատել բոլոր կարևոր նախագծերում, լինի ռազմարդյունաբերական համալիր, թե արևելագիտություն, բժշկություն, թե տիեզերքի նվաճում և, իհարկե, մշակույթ: Ահա ընդամենը մի քանի անուն. մեծ ողբերգակ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյան, «Ռուբին» ԿԿԲ գլխավոր կոնստրուկտոր, ակադեմիկոս Ե.Ա. Գորիգլեջյան, Վ.Յա. Կլիմովի անվան ՓԿԲ գլխավոր կոնստրուկտոր, ակադեմիկոս Ա.Ա. Սարկիսով, պրոֆեսոր Յու.Ա. Պետրոսյան՝ երկար տարիներ ղեկավարել է ՌԳԱ արևելագիտության ինստիտուտը, Կենսաբանական գիտությունների միջազգային միության կենսաբանության բաժանմունքի նախագահ, ակադեմիկոս Ա.Լ. Թախթաջյան, լուսնագնացի առաջին ստեղծողներից՝ ակադեմիկոս Ա.Լ. Քեմուրջյան, Օտտոյի անվան Մանկաբարձության և գինեկոլոգիայի ԳՀԻ տնօրեն, ՌԲԳԱ ակադեմիկոս Է.Կ. Այլամազյան: Երկար տարիներ Վ.Ֆ. Կոմիսարժևսկայայի անվան թատրոնի գլխավոր ռեժիսորն էր Ռ.Ս. Աղամիրզյանը, Ռուսաստանի գլխավոր մանկական նեյրովիրաբույժն էր բժշկական գիտությունների դոկտոր Վ.Ա. Խաչատրյանը, նշանավոր մանկաբույժ էր պրոֆեսոր Ա.Վ. Պապայանը, փայլուն երգեհոնահար էր Ռուսաստանի ժողովրդական արտիստուհի, պրոֆեսոր Նինա Օկսենտյանը, ԼՕՄՕ-ի (Լենինգրադի օպտիկամեխանիկական միավորման) գլխավոր կոնստրուկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր Բ.Կ. Իոնեսյանը, հիանալի կինոռեժիսոր, Ռուսաստանի ժողովրդական արտիստ Սերգեյ Միքայելյանը, կինո- և թատերական նկարիչ Մարինա Ազիզյանը...

«Պերեստրոյկան» ընտրության ազատություն բերեց: Հայտնի գրականագետ Ն.Բ. Բանկը Մատենադարանին նվիրեց եզակի գրքեր բյուզանդագետ, պատմական գիտությունների դոկտոր, Հ.Ա. Օրբելու աշակերտուհի Ա.Վ. Բանկի հավաքածուից: Լենինգրադը զգում էր Հայաստանի մերձավորությունը, նրա հոգեղենությունն ու ներքին արժանապատվությունը, ինչն անդրադարձավ 1988թ. տեղի ունեցած երկու իրադարձությունների վրա:

Ղարաբաղյան իրադարձությունների ժամանակ Լենինգրադի մտավորականությունը խիստ հետաքրքրված էր նրանով, թե ինչ է տեղի ունենում Երևանում: 1988թ. մայիսի երկրորդ կեսին Գրողների տանը հավաքվել էր Լենինգրադի մտավորականությունը՝ «առաջին ձեռքից» իմանալու ճշմարտությունը Ղարաբաղյան շարժման՝ Երևանի կողմից պատվիրակված ակտիվիստներից:

Մշակույթի նշանավոր շատ գործիչներ պաշտպանում էին հայ ժողովրդի արդարացի պահանջները: Առանձնապես կուզենայի նշել լենինգրադցի հայտնի բանաստեղծ Միխայիլ Դուդինին, որը հայ-ադրբեջանական հակամարտության առաջին դիմակայության տագնապալի ամիսներին բառիս բուն իմաս-

տով կորչում էր Հայաստանում: Նա մենակ ուղղաթիռով թռչում էր Ստեփանակերտ՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվում շրջափակված Ղարաբաղում, որտեղ անօրինություններ էին կատարում ադրբեջանցիներն ու խորհրդային զորքերը: Եվ վերադառնալով Երևան՝ բացահայտ ելույթ ունեցավ Մատենադարանում: Երևանի ամբողջ մտավորականությունը տագնապով ու սրտահույզ ուշադրությամբ էր լսում լենինգրադցի ճակատային բանաստեղծին: Դա իսկական բարեկամի ձայն էր:

Սպիտակի երկրաշարժը բաց արեց հասարակ լենինգրադցիների սրտերը, որոնց օգնությունը Հայաստանի տուժած շրջաններին անշահախնդիր էր: Իսկ հայ համայնքը ոչ քուն ուներ, ոչ դադար: Հայաստանը տեսավ և գնահատեց Լենինգրադի բարձր մարդկային եղբայրությունը, այն եղբայրությունը, որը կմնա Հայաստանի սրտում՝ որպես կարեկցության և սիրո լուսավոր նշան:

80-ականների երկրորդ կեսն անցավ վերակառուցողական տրամադրությունների նշանի ներքո, երբ բացախոսությունը ճշմարտության կարևորագույն վեկտորն էր: 1988թ. հուլիսի 11-ին Լենինգրադի քաղաքային խորհրդի գործկոմի որոշմամբ Սբ. Հարություն (Վասիլևյան կղզի) եկեղեցու շենքը, որը երկար տարիներ քանդակագործի արվեստանոց էր եղել, հանձնվեց հայ կրոնական միությանը: Տառացիորեն մի քանի ամիս անց Համբարձման եկեղեցին առաջինը ԽՍՀՄ տարածքում փակված բոլոր հայկական եկեղեցիներից բացվեց հավատացյալների առջև: Սուրբ Եկատերինայի եկեղեցին, որը երկար տարիներ թատերական դեկորացիաների պահեստի էր վերածվել, վերադարձվեց միայն 1992թ.՝ Սանկտ Պետերբուրգի քաղաքապետարանի որոշմամբ: Եվ դա՝ 60 տարի անց: Եռանդուն, խելացի և բարեկամասեր հոգևոր հովիվ Եզրասը աշխատասիրության սեփական օրինակով կարողացավ վաստակել ծխականների վստահությունը, համախմբել Լենինգրադի հայկական համայնքը: Սեր էր հարկավոր առ Աստված և մարդիկ, նպատակասլացություն և աշխատասիրություն, կամք, մաքուր մտահղացումներ՝ համայնքի խնդիրների շուրջ հայերին համախմբելու և ամայացած եկեղեցիները վերականգնելու համար: Երիտասարդ հոգևորականը կարողացավ միավորել և համախմբել բարձրինտելեկտուալ հայ հանրությանը և վերականգնել Նևսկի պողոտայի «կապույտ մարգարտի»՝ Սբ. Եկատերինա եկեղեցու երբեմնի վեհությունը:

Եվ այսպես, փլուզվեց ԽՍՀՄ-ը, իսկ Ռուսաստանն ու Հայաստանը դարձան ինքնիշխան պետություններ: Ազատ Ռուսաստանն ու ազատ Հայաստանը ռազմավարական գործընկերներ են մեծ Կովկասյան և մեծ Մերձավորարևելյան տարածաշրջաններում: 2000թ. հունիսի 12-ին Սբ. Եկատերինա եկեղեցին օծվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին II-ի կողմից: Հանդիսությանը ներկա էին Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսեյ II-ը, քաղաքի ղեկավարությունը, Հայ Առաքելական և Ռուսաց Ուղղափառ եկեղեցու եպիսկոպոսներ, տարբեր դավանանքների ներկայացուցիչներ, ՌԴ Պետդու-

մայի, Սանկտ Պետերբուրգի օրենսդիր ժողովի պատգամավորներ, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:

Եվ այսօր, 2010թ., գրեթե քառորդ դար անց, մենք տեսնում ենք հիմա արդեն եպիսկոպոս և Նոր Նախիջևանի ու Ռուսաց թեմի առաջնորդ Եզրաս Ներսիսյանի անդուլ ջանքերի պտուղները:

Սարտ, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. «Армяно-русские отношения в XVII в.» Т 1., Ереван, 1953.
2. *И.Кант,* С/С, т. VI, М., 1966.
3. «Полное Собрание Законов Российской империи», Т.IV, (1700-1712) № 2349 СПб., 1830.
4. Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, Ч.1. М., 1833.
5. ЦГИАРФ. Ф. 880.Оп.5. Д.108. Л.12.
6. Известия АН Армении, общественные науки. № 8. Ереван, 1956. С.6 Три века Санкт-Петербурга. XVIII в. Энциклопедия. Кн.1, СПб. 2001.
7. ЦГИА СПб. Ф. 19. Оп. 1. Д. 7795.Л. 1.
8. *А.П. Базиянц,* Правда интереснее легенд, М., 1975.
9. Журнал «Звезда», 1990, № 5.
10. «Евреи и хозяйственная жизнь», В. Зомбарт, "Айриспресс", Москва, 2004.
11. Архив И.В. Сталина, РГАСПИ.
12. *Н.Я. Марр,* Ани. Книжная история города и раскопки на месте городища, Л-М, 1934.
13. *Н.Я. Марр,* Армянская культура, Ереван, 1990.

АРМЯНСКИЙ ПЕТЕРБУРГ

Рубен Ангаладян

Резюме

Чем на протяжении всех этих трехсот лет привлекал Петербург армян, и что дали они городу и империи? И что город и империя дали самой Армении? Сколько выдающихся армянских имен за эти три столетия обогатили историю Северной столицы, прославляя высокое имя Петербурга. А ведь сама армянская диаспора на протяжении всех этих столетий была крайне немногочисленна. В конце XIX века здесь проживало чуть более 2 тысяч армян, а в 1985г. их было около 7 тысяч. Лишь в последние, постсоветские годы община довольно сильно пополнилась. Армянская диаспора в Петербурге, а затем в Ленинграде с полной отдачей работала во всех важнейших сферах жизнедеятельности города и страны, будь то ВПК или востоковедение, медицина или освоение космоса и, конечно же, культура.